«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 96 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT07-2504-C (0805)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 7-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	08 մայիսի 2025 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Սարգիս Բադալյան - ՀԽ նախագահ (առկա),
Աշոտ Մկրտչյան (առկա),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Պետրոսյան (առկա),
Լևոն Բուդաղյան (առցանց),
Եվա Արևիկյան (առցանց),
Իրինա Գեյկո (առցանց),
Տիգրան Բունիաթյան (առցանց),
Ռաֆֆի Ֆըսթըգճյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Արտավազդ Մինասյան,
Տիգրան Հարությունյան:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առկա:),
Սիլվիա Նաջարյան (Հիմնական դպրոցի տնօրեն: Առկա:),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն: Առկա:),
Գոհար Հովհաննիսյան («Այբ» հիմնադրամի գործադիր տնօրեն: Առցանց:),
Իզաբելլա Մանասարյան (Ռեսուրսների ներգրավման և հաղորդակցության տնօրեն: Առկա:),
Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ: Առկա: Մասնակցել է սկսած հարց 4-ից),
Աննա Ակոպյան (Համայնքի գծով տնօրեն: Առկա:),
Մերի Հովսեփյան (Ակադեմիական տնօրեն: Առկա:),
Անահիտ Հարությունյան («Այբ» հիմնադրամի ԱԲ ծրագրի ղեկավար: Առկա: Մասնակցել է հարց 4-ին):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *Որոշվեց հաստատել ՀԽ-ի նիստի 2025 թվականի մայիսի 8-ի օրակարգը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Հարց 3. «Զեյթուն Սվիթ» ընկերության կողմից օգտագործվող հողատարածքների պայմանագրի երկարացման հարց:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց լիազորել Դավիթ Սահակյանին կնքել նոր պայմանագիր «Զեյթուն Սվիթ» ընկերության հետ նույն տարածքի վարձակալության համար նույն սահմանափակման կիրառմամբ՝ երեք տարի ժամկետով, վարձակալության վճարը սահմանել տարեկան 3,300,000 ՀՀ դրամ (ամսական 275,000 ՀՀ դրամ):* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Դպրոցում Քեմբրիջի ծրագրերի իրականացման առաջարկ:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց սահմանված 10000 անգլիական ֆունտի շրջանակում իրավասության տալ «Այբ» դպրոցին շարունակել բանակցությունները Քեմբրիջի հետ՝ ուղղված Քեմբրիջ դպրոցի և A-Level առաջարկելու լիազորություններ ստանալուն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բանակցել պետական ատյանների հետ:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Դպրոցի տարածքների օգտագործում՝ իրավական և տնտեսական հնարավորությունները՝ հավելյալ եկամուտների ձևավորման նպատակով և հնարավորությունները՝ համայնքաշինությանը, այդ թվում շրջանավատների ակումբին աջակցելու նպատակով:
Հարց 6. Իեն Քրեյգի կողմից գնահատման կազմակերպման գործընթացի ընթացքի ներկայացում:
Հարց 7. Կրթավանի զարգացման աշխատանքերի կարգավիճակի հաշվետվություն: Դ. Սահակյանը ներկայացրեց կրթավանի զարգացման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ըստ Հավելված 5-ի :
Հարց 8. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած:
Որոշում՝ հարց 8 *Որոշվեց Հավելված 6-1-ի 92-ը կետը համարել հաստատված:* Որոշումը կայացված է միաձայն:

Կետ 9 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել հուլիսի 10-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 10. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 20:30-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բաղայան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____